



ՍՏԵՓԸՆ ՎԵՐԴԱՊԵՏ ԻՍԿԵՆԴԵՐԵԱՆ.

Յունուար 9-ին վախճանուեցաւ 74 տարեկան հասակում Մայր Աթոռի միաբանութեան ներկայ անդամներէ մէջ ամէնից ծերը՝ Ստեփան վարդապետ Իսկենդերեան, և թաղուեցաւ յաջորդ օրը, կիւրակէ, միաբանական գերեզմանատան: Հանգուցեալը քահանայութեան մէջ այրիանալով կուսակրօնութիւն է ընդունել 1858 թ. յունուարի 13-ին, իսկ վարդապետութեան մասնաւոր աստիճան ստացել է 1863 թ. օգոստոս 5-ին: 1860 թ.-ին Երջանկայիշատակ Մատթէոս կաթուղիկոսի կոնդակով բարեկարգիչ է նշանակուել Սոր—Բայազիդի վիճակի. 1861 թ.-ին կարգուել է օգնական ս. Հովիսիմէ վանքի վանահայր Թարութիւն վարդապետի և պարգեատրուել նոյն տարին վարդապետական ակադեմիա խաչով: 1864 թ.-ին նա կարգուել է Հոռիձոյ ս. Աստուածածին վանքի վանահայր և նոյն տարին առանձին կոնդակով նոյն վանքի խնամակալ ընկերութեան նախանշամ: 1870 թ.-ին Երջանկայիշատակ Գէորգ կաթուղիկոսի կոնդակով նշանակուել է Սոր—Վիրապի վանքի վանահայր և նախագահ Արտաշատեան ընկերութեան: Այնուհետեւ վանահայրութեան պաշտօն է վարել ուրիշ զանազան վանքերում և երկար տարիներ ծառայել է Մայր Աթոռին: Շտամարանի վերակացու էր նա վերջերս և Վաղարշապատի աթոռապատկան հասցիների ժողովուրդ:

Հանգուցէ՛ Տէր զհոգի նորա ի լոյս երեսաց իւրոց:



Սոր տարի օրը իւր հայրենի Բարանտարա գիւղում վախճանուել և յունուար 3-ին թաղուել է Մայր Աթոռի միաբան և Ճեմարանի սան Արամ սարկ. Լզիլեան: Հանգուցեալը ծնուած էր 1873 թ. մայիսի 8-ին.

Իսկ Ճեմարանի Ծ. դասարան ընդունուել է 1893 թ.-ին: 1895 թ.-ին դպրոցական բաժինն աւարակելով՝ Ա. լսարանի ուսանող էր նա, երբ յաջորդ տարին մի խումբ ընկերների հետ Մայր Աթոռի միաբան գրուեցաւ և սարկաւագ ձեռնադրուեցաւ—որպիսի՜ վառ իղձերով, որպիսի՜ պայծառ ոգևորութեամբ, որպիսի՜ մաքուր յոյսերով և մեծ հաւատով դէպի ապագան ... Իւր աշակերտական կեանքի մէջ միշտ աչքի էր ընկել նա ամենապարկեշտ և օրինակելի վարքով, իւր հանգարտ ու հեղինակութեամբ, որի ներքոյ սակայն աղնիւ եռանդով լի մի սիրտ էր թաղնուած: Իւր բնորած կոչման նուիրուած էր նա ամենաշերմեանդն սիրով, բայց դժբաղդարար արդէն ձեռնադրութեան տարին նորա մէջ թուրքախոսի նշաններ երեւցին և նա ստիպուած էր ընդհատել ուսումը և մերթ իւր հայրենի գիւղի մաքուր օդի մէջ, մերթ Գանձակ քաղաքի մեղմ կլիմայի ներքոյ բժշկութիւն որոնել՝ ի զուր ... Եւ այժմ նորան բոլոր ի մօտոյ ճանաչողները մանաւանդ թէ ամբողջ Ճեմարանական ընտանիքը, դառնալէս ողբում են այդ վաղաժամ կորուստը և առ Ամենաբարձրեան աղօթում որ յիշէ իւր արքայութեան մէջ ս. Եկեղեցւոյ դեռահաս պաշտօնէին:



ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՐԱՊԵՏՈՒ

Թ Ի Փ Լ Ի Ս Ո Ւ Մ.

Սորին Վեհափառութիւնը Դեկտ. 2-ին ճանապարհ ընկնելով Մայր Աթոռից՝ յաջորդ օրը Երեանում մնաց և ընդունեց պ. Սահանգապետի այցելութիւնը, որ և վերադարձրեց նոյն օրը: Երեանից մինչև Թիֆլիս Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին միայն Արթ. Եղիշէ և Կորիւն վարդապետները, իսկ Դեր. Սեբեկս արքեպիսկոպոսի համար Սորին Սրբութեան բարեհաճ կամքն էր, որ առաջին իսկ իջեանից վերադառնայ և իւր վիճակի մի քանի անդամներին զործերով դրու-

զուխ մանապարհին Սորին Անհատութեան շքանշանն աւելացաւ նաեւ Սոր Բա-
յաղիտի գործակալ Արծ. Մատթէոս վար-
դապետը. իսկ Աղստաֆա կայսրանում գի-
մաւորեց Թիֆլիսի թեմի առաջնորդ Գեր-
դերգ արքեպիսկոպոսը, Արծ. Թադէոս վար-
դապետի և Համադաս քահանայի հետ:

Դեկ. 8-ին ժամը 11¹/₂-ին Սորին Ս. Օծութիւնը ժամանեց Թիֆլիս: Առաւօտեան ժամը 8-ից սկսուած էր այստեղ բոլոր եկե-
ղեցիներին զանգահարութիւնը. վանքի բա-
կում շարէ շար կանգնած էին Սերսիսեան
գաղթի աշակերտները՝ տեսչի ուսուցիչների
և հոգաբարձուների հետ. բազմութիւնը հետ
զհետէ աւելանում էր և քաղաքի ամբողջ
հոգեւորական դասը՝ զգեստաւորուած, խաչ ու
խաչվառներով, կազմ ու պատրաստ կանգնած
էր վանքի մեծ դարբասի առաջ. վերջապէս
մօտ ժամը 12-ին Սորին Անհատութեան
կողքը շրջապատուած բազմութիւ կառքերով
կանգ առաւ վանքի դրան մօտ և Անհա-
տա կաթողիկոսն իջնելով կառքից մտաւ
ամպհովանու տակ. իսկ Սերսիսեան գաղթի
երգեցիկ խումբը «Ուրախ լի» շարականով
ընդառաջեց գէպի եկեղեցի որսեղից պատշա-
ճաւոր սաղմոսից յետոյ՝ Սորին Սրբութիւնը
հանդիսով գնաց առաջնորդարանի շինուած-
քում իւր համար պատրաստած օթարանը:
Սորին Ս. Օծութեան ներկայացան այստեղ
Թիֆլիսի փոխ-նահանգապետը, մի քանի
բարձրաստիճան անձինք, մամուլի ներկայա-
ցուցիչներ ու Սերսիսեան գաղթի հոգա-
բարձուներն՝ ուսուցիչներն ու իրենց տեսչի
հետ:

Դեկտ. 11-ին, ժամը 1¹/₂-ին, Սորին
Անհատութիւնը այցելեց Կովկասի կա-
ռավարչապետ իշխան Գոլիցինին, թեմի
Ս. Առաջնորդի և այլ հոգեւորական անձանց
ուղեկցութեամբ: Ընդունելութիւնը սիրալիր
էր և տեւեց 40 րոպէ. իշխան Կառավարչա-
պետը Սորին Ս. Օծութեան հիւրասիրեց թե-
յով և քաղցրաւնիքով:

Սոյն օրն առաւօտեան ժամը 10¹/₂-ին
Անհատութեան Կաթողիկոսին այցելեց Գանձակի
նահանգապետ գեներալ—մայոր Արիսկեր և ըն-
դունեց Սորին Սրբութեան օրհնութիւնը:

Շաբաթ օրը դեկտ. 12-ին Կովկասի կա-
ռավարչապետ իշխան Գոլիցինը ժամը 1-ից
անց փոխ այցելութիւն տուաւ Անհա-
տա Հայրապետին. Սորին Պայծառափայլու-
թիւնը վեհարանում մնաց մօտ մի ժամ:

Սոյն օրը Սորին Անհատութիւնն այ-
ցելեց Արաստանի Էքզարխ Սորին Բարձր Սրբ-
ազնութիւն Փլաւեան արքեպիսկոպոսին: Այդ
օրը Անհատա Հայրապետին բազմ ունեցաւ
ներկայանալու Թիֆլիսի ռեպական ուսում-
նարանի տեսուչ Ա. Դ. Տերիւտինը և հրաւի-
րեց իւր ներկայութեամբ պատուելու հետե-
ւալ օրը ռեպական գաղթում լինելիք տա-
րեկան հանդէսը:

Դեկտ. 13-ին Անհատա Հայրապետին
այցելեց զենեւալ, իշխան Դ. Գ. Ամիրխիմարին:
Սոյն օրը վանքի մայր եկեղեցում Մ. Լօրիս
— Մելիքեանի յիշատակին նրա մահուան
տանամուտ տարեկարծի առթիւ, հանդիսա-
ւոր պատարագից յետոյ հոգեհանգիստ կա-
տարուեցաւ. հանդիսագիր էր Անհատա Հայ-
րապետը, որ և մի ազգու բանախօսութեամբ
յիշեցրեց հանգուցեալ զօրապետի գործերը և
Ռուսաստանին մատուցած ծառայութիւննե-
րը:

Դեկտ. 14-ին Արաստանի Էքզարխ Սորին
Բարձր Սրբազնութիւն Փլաւեանը փոխայցե-
լութիւն տուաւ Անհատա Կաթողիկոսին և
սիրալիր ընդունելութիւն գտնելով՝ Անհատա-
նում մնաց մօտ 50 րոպէ:

Հինգշաբթի օրը, դեկտ. 17-ին, ժամը
11-ին Սորին Անհատութեան այցելեց
Սորին Բարձրութիւն Մեծ իշխան Սիկոլայ
Միխայլովիչը: Մեծ իշխանը Անհատա Հայ-
րապետի հետ խօսակցեց մտերմօրէն մօտ 45
րոպէ:

Դեկտ. 19-ին շաբաթ օրը Կովկասի կա-
ռավարչապետ իշխան Գ. Ս. Գոլիցինին իւր պա-
լատում ճաշ տուաւ Անհատա Կաթողիկո-
սի պատուին. ճաշին ներկայ էին ի միջի այ-
լոց՝ Թիֆլիսի թեմի Առաջնորդ Գեր. Տ.
Գերգ արքեպիսկոպոսը, գեներալ Սկալոնը,
կառավարչապետի խորհրդի անդամ գաղանի
խորհրդական Ս. Դ. Պրիբիլը և ին. թարգմանի
գերը կատարում էր արեւելեան լեզուների ա-
ւագ զրաքննիչ պ. Ալէքսանդր Բիշմիլեանը:

Յուն. 6-ին ծննդեան և Մկրտութեան օրը վանքի մայր եկեղեցում հանդիսաւոր պատարագից յետոյ որ մատոյց Գեր. Գէորգ արքեպիսկոպոսը, Հայոց հոգեւորականութիւնը հանդիսաւոր թափօրով որի զլուին էր անցել Վեհափառ Աթոռակիցսը՝ զիմեց դէպի Կուր գետի վերայ բազմամ «Յորդանան» ուր և կատարուեցաւ Զրօրհնեաց հանգէսը։ Թիֆլիսի տաճնեակ հազարաւոր բնակիչները հաւաքուած էին գետի երկու ափերում։ Միջոյէլեան կամրջից ներքե և վերեւ, Հայոց և Ռուսաց Յորդանանի շուրջը։ Նորին Ս. Օծութեան ներկայութիւնը որ շնայելով իւր ակարութեան ամենայն սիրով հաճել էր մասնակցել հանդիսին առանձին իմն շուք էր տալիս նորան որ ինչպէս յայտնի է ոչ մի տեղ այնպէս փառաւոր կերպով չէ կատարուում ինչպէս Թիֆլիսում։ Մալք Զրից հանեց Թիֆլիսի քաղաքապետ Պ. Գ. Նւանդուլեանցը։ Հանգէսը վերջանալուց յետոյ Վեհաբանում ըստ սովորականին նախաճաշ էր պատրաստուած տօնը շնորհաւորողների համար։

Յունուարի 13-ին երեկոյեան ժամը 4-ին Նորին Վեհափառութիւնը շրջապատուած հոգեւորականներով և երգեցիկ խմբով իջաւ վեհաբանից վանքի մայր եկեղեցին և Յովհաննէս Մկրտչի նախատօնակին ներկայ եղաւ։

Նորին Ս. Օծութեան Անուանակոչութեան օրը, յուն. 14-ին վանքի մայր եկեղեցում հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ և Վեհափառ Հայրապետը մի հակիրճ քարոզ խօսեց։ Եկեղեցական հանգէսը վերջանալուց յետոյ Նորին Ս. Օծութիւնը բազմութիւն անձանց շնորհաւորութիւններն ընդունեց. այցելեցին ի միջի ալոյց Թիֆլիսի կոմսական տղան. մայր Ռիչարդը, ոստիկանապետ պ. Մաստիցկին, ամբողջ հոգեւորական գասը, Թիֆլիսի քաղաքապետ պ. Գ. Նւանդուլեանցը, Ներսիսեան զպրոցի հոգաբարձուներն և ուսուցիչները և այնչ Նոյն օրը Մեակիսի բանտի բանտարկեալներին ճաշ տրուեցաւ Վեհափառ Հայրապետի հաշուին որ դորա համար 100 ռ. էր նուիրել՝ այդ բանտի Հայոց եկեղեցու մէջ դանուալ Ս. Շուշանիկի դամբարանին ուխտի կրած ժամանակ։

ՄԵՏԵՆԱԳԵՐԱՆ ՄԵՅՐ ԱԹՈՌՈՅ.

Մայր Աթոռի մատենադարանի համար շնորհակալութեամբ ստացել ենք՝

1. «Արրազան պատարագամատոյցք Հայոց» ի Հ. Յովսէփայ Վ. Գաթրճեան, Հրատ. ի Հ. Յակոբոս Վ. Տաշեան, Վ. ինննա. 1897. Պ. Յովսէփ Զարպաշեանից։
2. Մկրտիչ Էմինի երկասիրութիւնները Հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան մասին (1840—1855 թ.), Մոսկուա. 1898:— Լագարեան մեմարանի Տեղադրիւնից։
3. Յովհաննէս Մալխասեան— Հերոս Մոլոտ 1. Թիֆլիս 1898. Հեղինակից։
4. Ոսկի բարեկամ։ Է. ի. թէրտ — երազագիրք. Բ. տպ. Գրիգոր քահանայ Մանգալունցի, Մասկեապարանայէս՝

Գ. Վ. Յովսէփեան.

Հասցէն Вь Монастырскую Библиотеку. Эчмιάдинъ.

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք .

Ս. Պատրիարք Հայրը զրեց գաւառային առաջնորդարաններուն, որ իրենց վիճակին մէջ զրտնուած օտար որբանոցներու որբերը յառաջիկայ Ծննդեան տօներուն առթիւ եկեղեցի բերուելու և խոստովանութեան ու Ս. Հաղորդութեան մասնակցի ընել տալու համար ամէն հոգածութիւն ի գործ դնեն։

— Մարաշէն կը գրեն Պատրիարքարան լմէ տեղւոյն որբանոցի որբերուն թիւը 80 ի բարձրացած է. Պատրիարքարանէ զրկուած նպաստին համար շնորհակալութիւն կը յայտնեն, և որբերուն համար զպրոցական գասագիրք կը խնդրեն. Ս. Պատրիարք Հայրը յանձնարարեց նորակազմ Գրեանկան յանձնաժողովին որ առաջին առթիւ Մարաշի որբանոցէն ուղուած զիբերը զրկուին։

— Մուշի Խոսովիակականեր ու բողոքականներ. — Մշոյ մէջ ընդամենը կան 30—40 կաթողիկ ընտանիքներ, որոնք ինչպէս կը կարծուի, 1—1½ դար առաջ դատուած են եղբր Մայրենի եկեղեցիէն։ Ունին իրենց յատուկ եկեղեցի մը, հիմնարկուած 1888-ին, Եկեղեցւոյ զիմաց, նոյն փողոցին մէջ։